

Ի՞նչ հիշել պատերազմի մասին:**Երկրորդ համաշխարհային պատերազմը հերոսական պատումից դուրս**

Երկրորդ համաշխարհային պատերազմին (հետխորհրդային երկրներում հայտնի «Հայրենական մեծ պատերազմ» անվամբ) նվիրված շքերթը, որն այս տարի Ռուսաստանում կայացավ հունիսի 24-ին, և որին ներկա էին նաև հետխորհրդային երկրների՝ այդ թվում՝ Հայաստանի ռազմական ուժերը, ՌԴ նախագահ Վ. Պուտինը հանդես եկավ ելույթով. «Ուղիղ 75 տարի առաջ Կրեմլի դարպասների մոտ տեղի ունեցավ հաղթողների լեգենդար շքերթը: Այդ շքերթը պատմության մեջ մնաց իբրև չարի նկատմամբ բարու, պատերազմի նկատմամբ խաղաղության և մահվան նկատմամբ կյանքի վերահաստատում: ...Սովետական ժողովուրդը եվրոպական պետություններին ազատագրել է զավթիչներից, վերջ է դրել ողբերգական հոլոքոսթին, նացիզմից փրկել է Գերմանիայի ժողովրդին»¹: Այդ ելույթն ուղղված էր 20-րդ դարի համաշխարհային պատմության մեջ ԽՍՀՄ-ի, և Ռուսաստանի՝ որպես դրա իրավահաջորդի, դերի վերագնահատմանը: Իրականում ՌԴ նախագահի ուղերձը վերարտադրում էր դեռևս Ստալինի օրոք ստեղծված պատերազմի մասին հերոսական պատումը: Մեծապես շրջանառվում էր այն գաղափարը, որ ԽՍՀՄ-ը, Գերմանիան կապիտուլյացիայի ենթարկելով, աշխարհն ազատել է ֆաշիզմից՝ փրկելով հրեաներին²:

Երկրորդ համաշխարհային պատերազմի մասին պատումները բացառապես հերոսական և սրբազնացված են: Հերոսականացման գործընթացը որոշ չափով սկիզբ է առել պատերազմի ընթացքում և շարունակվել դրանից անմիջապես հետո, իսկ հետագայում առավել շեշտադրվել է Խրուշչովի և Բրեժնևի ջանքերով: Գերմանիայի անսպասելի և «նենգ» հարձակումը, ԽՍՀՄ-ի հաղթանակը և Բեռլինի գրավումը, ինչպես նաև քաղաքականապես ուղղորդվող և կառուցելի կոլեկտիվ հիշողությունը դրանում կարևոր դերակատարում է ունեցել: ԽՍՀՄ-ի ազատագրող կերպարը կառուցվում էր և շարունակում է կառուցվել՝ ֆաշիստական «հրեշավոր վարչակարգին» հակադրվելով:

«Հայրենական մեծ պատերազմի» պաշտամունքը, որի մեկնարկը տրվել է բրեժնևյան ժամանակաշրջանում³, ժառանգել է նաև անկախ Հայաստանը: Այն, ինչ մենք հիշում ենք պատերազմի մասին, պատերազմի զոհերն ու հերոսներն են, մարտնչող դիվիզիաների համարներն ու Բեռլինը գրավելիս հայ զինվորների քոչարին: Բրեժնևի կառավարման օրոք կառուցված մի շարք հիշատակի համալիրների թվում 1970թ. բացվեց «Հայաստանը Հայրենական մեծ պատերազմում 1941-1945 թվականների» թանգարանը՝ իր մեջ ամփոփելով

¹ Парад Победы 2020 на Красной Площади. Москва 24 июня 2020 года, 24.06.2020, www.youtube.com/watch?v=9RpzTNTnMt4 (43:25 րոպե):

² Սովետական Հայաստան, 1945թ., №37, Հրաման Գերագույն գլխավոր հրամանատարի:

³ Roger Markwick, The Great Patriotic War in Soviet and Post-Soviet Collective Memory// The Oxford Handbook of Postwar European History, 2012.

պատերազմի բրեժնևյան նարատիվը: Թանգարանի ցուցադրության մեջ տեղ են գտել հայ գեներալների ու մարշալների անցած ուղին, հայկական դիվիզիաների սխրագործությունները և պատերազմում զոհվածների անունները⁴: Նույնիսկ պատերազմի մասին ժամանակակից պատմագիտական հոդվածները վերարտադրում են Երկրորդ համաշխարհային պատերազմի մասին նույն հերոսական պատումը⁵:

Կոլեկտիվ հիշողությունը քաղաքական կոնստրուկտի է վերածվում այն ժամանակ, երբ ինտելիգենցիան և իշխանությունն իր վերահսկողության տակ գտնվող գործիքներով (ՁԼՄ-ներ, հուշահամալիրներ/թանգարաններ և տարեդարձային նշումներ) գծում են իրադարձության մասին հիշողությունների սահմանները: Մեծ հաշվով այժմ Հայաստանում պատերազմի մասին բոլոր պատումները ներառող, միասնական պատմությունը քննցված է. սա հետևանք է տրավմատիկ հիշողությունների երկար տարիների լռեցման: Էսսեն պատերազմի «հերոսականացման» նարատիվի դեկոնստրուկցիա է, պատերազմի մասին անտեսված պատումները պատերազմական իրադարձությունների ամբողջական համատեքստի մեջ ընդգրկելու փորձ:

ԽՍՀՄ-ում մեդիայի նկատմամբ վերահսկողությունն ու սահմանված ցենզուրան նպաստեց, որ հանրային սեփականություն դառնա պատերազմի հերոսական պատկերումը՝ կտրված անձնական հիշողությունից: Կոլաբորացիոնիզմի մեջ մեղադրվողների նկատմամբ տասնամյակներ ձգվող դիսկրիմինացիան, զանգվածային զոհերը, բռնություններն ու սովը դուրս մնացին հանրային հիշողությունից: Պատերազմի մասին հերոսական, սրբազնացված պատումը քողարկեց այդ կերպարի մեջ չտեղավորվող մյուս բոլոր նարատիվները՝ ստեղծելով ընտրողական կոլեկտիվ հիշողություն: Ինչպես նկատում է Հալբվաքսը. «Կոլեկտիվ հիշողությունն ավելին է, քան անձնական հիշողությունների համագումարը. այն կենդանի պատմության մասին անձնական հիշողությունների իրողությունից «պիտանի անցյալի» կառուցում, մանիպուլացիա և հավաքագրում է»⁶: Եթե անձնական հիշողությունները կրում են պատերազմի ընթացքում կատարվածի ողջ գունապնակը, ապա կոլեկտիվ հիշողությունն ընտրովի է. այն շեշտադրում է միայն այս կամ այն երևույթը: Իսկ պատմությունը կոլեկտիվ հիշողության հիմքն է. այն ոչ թե իրողությունների հաջորդական շարադրում է, այլ իդեալականացված պատմություն, որը կառուցում է երևակայված, միֆականացված, ազգային պատմություն: Պատմությունը հայտնվում է այն ժամանակ, երբ մարում կամ քանդվում է սոցիալական հիշողությունը: Պատերազմը վերապրած սերնդի՝ կյանքից հետզհետե հեռանալու հետ մեկտեղ վերանում են նաև անհատական պատումները՝ փոխարինվելով պատերազմի սակրալացված, մակերեսային գաղափարով, ինչն էլ դառնում է հետագա սերունդների սեփականությունը: Չնայած դեռևս կենդանի է պատերազմը վերապրածների

⁴«Մայր Հայաստան» ռազմական թանգարանի պաշտոնական կայքէջ, www.mayrhayastan.am:

⁵Տե՛ս օրինակ՝ Հարությունյան Ա., Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945թթ.), <http://iraber.asj-oa.am/6427/1/12.pdf> և Մինասյան Է., Հայ հերոսուհի կանայք, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, www.armin.am/historyofarmenia/images/menus/2253/Hay_herosuhi_kanayq.pdf:

⁶Maurice Halbwachs, The Collective Memory, New York, Harper & Row, 1980, pp. 76-78.

որոշակի տոկոսը՝ նրանց տրավմատիկ հիշողությունները, կոլեկտիվ հիշողության տրամաբանությանը ենթարկվելով, դուրս են մղվում անձնական պատումներից կամ սկսում են սնվել կոլեկտիվ հիշողության պատումներով՝ հանգելով ստացած շքանշաններին ու Կարմիր բանակի անցած ուղուն, ինչպես դա նկատում ենք պատերազմի վետերան Ռ. Աբգարյանի բանավոր պատմության մեջ⁷:

Բացի հերոսական պատմությունից՝ պատերազմի մասին պատմությունը նաև մարդկային կորուստների պատմություն է՝ հաշվի առնելով 27 միլիոն զոհերը⁸ և պատերազմի ժամանակ ճամբարներում մահացության բարձր ցուցանիշը⁹: Առանց նվաստացնելու ռազմաճակատում կռված զինվորի և կամավորների ներդրումը՝ չպետք է անտեսել նաև այն մարդկանց, որոնք պատերազմի ընթացքում զոհ են դարձել երկու տոտալիտար ռեժիմների բռնություններին ու մանիպուլյացիաներին, որոնց անձնական պատումները լռեցվել են նրանց մահով: Մի կողմից պատերազմում ֆաշիզմի նկատմամբ ԽՍՀՄ հաղթանակի, մյուս կողմից կոլեկտիվ հիշողության մեջ պատերազմի սրբացման ու հաղթանակի հերոսականացման միջոցով գերակշռող նարատիվից դուրս մնացին սեփական ժողովրդի նկատմամբ իրականացված զանգվածային բռնությունները, և ներկայումս լայնորեն պրոպագանդվող հայրենասիրական մղումին հաճախ հակադրվող խոսույթները: Պատերազմի ժամանակ ստալինյան վարչակարգի կողմից իրականացված մարդկության դեմ հանցագործությունները քողարկվեցին ԽՍՀՄ-ի փրկիչ լինելու գաղափարով:

Զանգվածային բռնությունները


Խորհրդային անցյալը հետխորհրդային հասարակության մեջ հաճախ նոստալգիկ տրամադրություններ է առաջացնում: Անցյալը վերհիշելիս սովորաբար հաճախ չգիտակցելով անտեսում ենք խորհրդային պատմության ամենահիմնական բաղկացուցիչներից մեկը՝ բնակիչների նկատմամբ կիրառվող շարունակական բռնությունները: Նույնիսկ արտաքին վտանգի սպառնալիքի պայմաններում Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին այդ բռնությունները չեն դադարել, բայց երկու տարբեր իրականություններից՝ պատերազմում հաղթանակից և ռեպրեսիաներից, մենք գերադասում ենք հիշել միայն առաջինը: Չնայած այն բանին, որ պատերազմի տարիներին հետին պլան են մղվել դասակարգային պայքարը, ժողովրդի թշնամիների նկատմամբ հետապնդումները և առաջնությունը տրվել է հայրենասիրական ոգու բարձրացմանը՝ այնուամենայնիվ, ԽՍՀՄ կառավարությունը չի հեռացել իր քաղաքականությունից՝ երկրում ավանդական դարձած քաղաքական

⁷97-ամյա Ռոզալյա Աբգարյանը հաղթել է «Մոսկվա, ես սիրում եմ քեզ» մրցույթում, 24.10.2019, www.armeniasputnik.am/armenia/20191024/20869542/97-amyarozalya-abgaryany-haxtel-e-moskva-es-qez-sirum-em-mrcuytum.html:

⁸Roger Markwick, նշվ. աշխ.:

⁹Stephen Wheatcroft, The scale and nature of German and Soviet repression and mass killings, 1930-1945// Europe-Asia Studies, 48:8, 1319-1353 pp.

հետապնդումներից: Պատերազմական իրավիճակում քաղաքական այդ հետապնդումներն այլ բնույթ են ստացել՝ արտացոլելով պատերազմում որդեգրած գաղափարախոսությունը և հարմարեցվելով տարվող քարոզչությանը: Պատերազմի տարիներին Հայաստանից ընդհանուր առմամբ բռնադատվել են 5040 հոգի (29586-ից), որոնցից 4240-ը՝ տղամարդ, 800-ը՝ կին¹⁰: Բռնությունների մասին վկայությունները մթազնում են, նույնիսկ մոռացության են մատնվում պատերազմում ԽՍՀՄ տարած հաղթանակի մասին խոսույթի ֆոնին:



Ինչպես ԽՍՀՄ այլ երկրներում, այնպես էլ Հայաստանում ստալինյան շրջանում բռնադատված տղամարդիկ գերազանցում են կանանց թվաքանակը: Տղամարդկանց ֆիզիկական ուժն օգտագործվում էր աշխատանքային ճամբարներում, քանի որ վերջիններս ԽՍՀՄ-ի ծանր արդյունաբերության զարգացման գործում կարևոր տեղ էին զբաղեցնում¹¹: Աղյուսակի պատկերը ցույց է տալիս, որ Խորհրդային Հայաստանում տղամարդկանց պարագայում բռնությունները երեք պիկ են ունեցել, իսկ կանանց դեպքում՝ երկու: Երկու սեռերի պարագայում էլ պատերազմի տարիների բռնությունները ստալինյան տեռորի խոշոր

¹⁰Տվյալների համար հիմք է ծառայել «Հագարաշեն» ազգաբանական հետազոտությունների կենտրոնի և Հայաստանի ազգային արխիվի համատեղ աշխատանքների շնորհիվ ստեղծված բռնադատվածների էլեկտրոնային շտեմարանը, որը կազմվել է Խորհրդային տարիներին բռնադատվածների կարճված գործերի հիման վրա: Տե՛ս Խորհրդային Հայաստանից ռեպրեսվածների մասին տվյալների շտեմարան, www.baza.armeniatotalitaris.am/:

¹¹ГУЛАГ: Экономика принудительного труда, отв. ред. Л. Бородин, П. Грегори, О. Хлевнюк, РОССПЭН, Москва, 2008, сс. 17-20.

ալիքներից մեկն են: Առավել հատկանշական է, որ ամենամեծ թվով տղամարդիկ բռնադատվել են Մեծ տեռորի տարիներին՝ 1937-1938 թթ., իսկ բռնադատված կանանց թվաքանակն առավելագույնի է հասել հենց պատերազմի տարիներին՝ կազմելով **800**, այսինքն՝ բռնադատված կանանց ընդհանուր թվի (մոտ 1300 հոգի) **61%**-ը: Բանն այն է, որ ռեպրեսված կանանց թվի աճի մեջ պատերազմական իրավիճակն առանցքային տեղ է զբաղեցրել: Պատճառները մի քանիսն էին: Մի կողմից ճամբարներում կանանց թվի աճը պայմանավորված էր տղամարդկանց ռազմաճակատ մեկնելով, մյուս կողմից ճամբարներում մահացությունների թիվը զգալիորեն աճել էր՝ բանակի ապահովման համար պարենի պակասի և հակառակորդի կողմից ճամբարները ոչնչացնելու պատճառով: Այս պայմաններում ՆԳԺԿ-ը¹² սկսել էր թիրախավորել կանանց: Նախկինում պատժից խուսափած, իշխանությունից դժգոհ որակավոր կանանց մեկուսացնելու քաղաքական նկատառումներից բացի ոչ պակաս կարևորություն ուներ նրանց բռնադատելու տնտեսական գործոնը: Չնայած կանանց աշխատուժի օգտագործումը հնգամյա պլանի մաս չի կազմել¹³ այնուհանդերձ, տղամարդկանց՝ որպես աշխատուժի քանակի, զգալի նվազման պայմաններում և Կարմիր բանակին պարենով ապահովելու նպատակներից ելնելով կանանց աշխատուժը կարող էր նպատակային համարվել: 1941 թ. փետրվարին Գուլագի ադմինիստրացիան ՆԳԺԿ-ի տարածաշրջանային բոլոր ղեկավարներին հրաման էր ուղարկել կանանց էտապներ վերցնելու մասին՝ հղելով արտադրության այնպիսի ճյուղեր, որտեղ կանանց աշխատուժը կարող էր պիտանի լինել (կար, տեքստիլ, փայտամշակում, կոշիկի և այլ տիպի արտադրություն)¹⁴:

Պատերազմի տարիներին բռնադատման մեղադրանքները բազմաթիվ էին և հիմնականում պատերազմական թեմատիկայով: Կանանց մեջ առավել մեծաքանակ խումբը «հայրենիքի դավաճանների ընտանիքի անդամներն» էին, որոնք ձերբակալվել և ընտանիքով աքաղարկվել էին «հայրենիքի դավաճան» որակված («թշնամու կողմն անցած», «գերի ընկած», կամ նույնիսկ «անցնելու մտադրություն ունեցող») իրենց ամուսինների, որդիների գնդակահարումից հետո: Տղամարդկանց պարագայում պատերազմի տարիներին բռնությունները կիրառվել են և՛ ծառայող զինվորների, և՛ թիկունքի նկատմամբ: Ես հատկապես ուզում եմ անդրադառնալ, այսպես կոչված, թիկունքում «ֆաշիստական քարոզչություն կամ գործունեություն ծավալելու» մեղադրանքին: Այս մեղադրանքով Հայաստանում բռնադատվել է **260** անձ՝ ընդգրկելով թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց: Դատապարտվածները նրանք էին, ովքեր համաձայն կազմված գործերի.

¹²Ներքին գործերի ժողովման հանցավորության դեմ պայքարով և հասարակական կարգի պահպանմամբ զբաղվող ՌՍՖՍՀ պետական կառավարման կենտրոնական օրգան:

¹³Emma Mason, *Women in the Gulag in the 1930s// Women in the Stalin Era*, Palgrave, 2001, p. 133.

¹⁴ЭпльбаумЭ., ГУЛАГ. Паутина Большого террора, Московская школа политических исследований, 2006, с. 297.

- կասկած կամ անհամաձայնություն են հայտնել թերթերում տարածվող տեղեկությունների հավաստիությանը՝ իրականացնելով ֆաշիստական քարոզչություն,
- գովերգել են ֆաշիստական բանակը կամ Հիտլերին,
- կազմել կամ տարածել են ֆաշիստական բնույթի թռուցիկներ,
- հիմնել են «ֆաշիստական կազմակերպություններ»:

ՆԳԺԿ-ը վերոնշյալ մեղադրանքները կառուցել է՝ հիմք ընդունելով «ֆաշիզմի նկատմամբ համակրանքի» խոսույթը: Իհարկե, արխիվային գործերը չեն կարող հիմք ծառայել բնակչության որոշակի տոկոսի մոտ հակառակորդի նկատմամբ «համակրանք» ունենալու փաստն արձանագրելուն՝ մի կողմից հաշվի առնելով բռնադատվածների անձնական գործերի՝ պատմական փաստի արձանագրման տեսանկյունից ոչ հավաստի լինելը, իսկ մյուս կողմից ՆԳԺԿ-ի՝ հետաքննությունը վարելու առանձնահատկությունը: Մասնավորապես, բռնադատման պատճառ դարձած առօրյա խոսակցությունները հետագայում քննիչի կամ գործով հարցաքննվող վկաների կողմից մեկնաբանվել են հետաքննությանը նպաստող լույսի ներքո¹⁵, իսկ հակասովետական ընդհատակյա կազմակերպությունների դեպքում երբեմն դրանք ստեղծել է հենց ՆԳԺԿ-ը՝ հակասովետական տրամադրություններ ունեցող անձանց բացահայտելու նպատակով¹⁶:

Այնուամենայնիվ, մի կողմից, եթե հիմք ընդունենք, որ ՆԳԺԿ-ը պարբերաբար քաղաքացիների տրամադրությունների մասին տեղեկություններ էր հավաքում, հետագայում դրանք կարող էին հիմք հանդիսանալ բնակչության շրջանում առկա հիմնական խոսույթները մեղադրանք դարձնելու համար, մյուս կողմից, այլ աղբյուրների վկայությունները հակառակորդի ոչ միանշանակ ընկալման մասին կարող են փաստել որոշակի «համակրանքի» խոսույթի գոյությունը:

«Ֆաշիզմի նկատմամբ համակրանքի» խոսույթը

Առաջին հայացքից միատարր թվացող այդ «համակրանքը», մանավանդ դրա պատճառներն, այնքան էլ պարզունակ և միաբնույթ չեն: Ս.Դեվիսի, հարվարդյան ծրագրի¹⁷ և հայ

¹⁵Այդ երևույթը դիտվել է բռնադատվածների անունով կազմված բոլոր արխիվային գործերում:
¹⁶Վիրաբյան Ա. զեկույց, «Քաղաքական բռնությունները Հարավային Կովկասում խորհրդայնացումից մինչև 1950-ական թթ. . պատմություն, առօրյա, հիշողություն» միջազգային գիտաժողով, Երևան, 2017:
¹⁷ԱՄՆ-ի կողմից 1950-ական թթ. անցկացրած պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ից Գերմանիայի անցած քաղաքացիների հետ խորացված հարցազրույցների փաթեթ է: Տե՛ս www.library.harvard.edu/collections/hpsss/index.html:

բանասացների վկայությունները հիմք են ծառայել բնակչության որոշ մասի «Ֆաշիստական» տրամադրությունները դասակարգել՝ ըստ արտահայտման ինտենսիվության:

❖ Խորհրդային և ֆաշիստական առաջնորդներին և նրանց վարած քաղաքականությունը նույնացվում էր՝ նրանց համարելով չարիքի արտացոլում: Գերմանիայի և Սովետական միության վարած քաղաքականությունը նույն նժարի վրա դրվեց հատկապես Մոլոտով-Ռիբենթրոպ պակտի կնքումից հետո՝ ուժգնացնելով մարդկանց տարակուսանքը. «Ֆաշիզմն ու կոմունիզմը նույնն են: Համատեղ ուժերով Լեհաստանի բաժանումը դա ակնհայտ դարձրեց»¹⁸: Նման տարակուսանքի մասին է վկայում հարվարդյան ծրագրի բանասացներից մեկը. «Մարդիկ մտածում էին, որ Հիտլերը Ստալինի նման է, ուղղակի ավելի լավ կառավարիչ է: Ինտելիգենցիան սկսել էր Ստալինին ավելի շատ ատել: Իսկ հասարակ մարդիկ, այնուամենայնիվ, մտածում էին, որ մեկը մյուսից լավը չէ»¹⁹:

❖ Երկիր ներխուժած հակառակորդի նկատմամբ վախը որոշ մարդկանց ստիպում էր ոչնչացնել բոլշևիզմին հարելու մասին ապացույցները կամ, ընդհակառակը, ֆաշիստական բանակի գալուն պես ցուցադրել իրենց նկատմամբ սովետական իշխանության հարստահարությունների մասին ապացույցները: Ընդունելով զոհի կերպարը՝ նրանք հույս ունեին, որ թշնամին բարեգութ կգտնվի իրենց նկատմամբ: Ազգագրագետ Գ. Շագոյանի գրառած նյութի համաձայն բանասաց Պարույր Տոնոյանը պատմում էր, որ երբ ֆաշիստական բանակը ներթափանցել է երկրի խորքերը, նրա տատն իրենց տանը գտնվող Լենինի բոլոր հատորները կարգադրել է այրել²⁰: Պատմողն ինքը ենթադրում էր, որ հավանաբար իր տատի կողմից այդ գործողությունը վախի հետևանք էր: Հատկանշական է, որ վերջինիս որդին այդ ժամանակ արդեն բռնադատված է եղել: Բոլշևիկյան կեղեքումները հակառակորդին ի ցույց դնելու մղումը հաճախ կարելի է գտնել արխիվային գործերում, ըստ որի՝ կանայք որոշել էին նախկինում ունեցած իրենց այգիների կավածքների ու իրենց ամուսինների ձերբակալության մասին փաստաթղթերը գերմանացիների գալուն պես փակցնել պատուհաններին, որ վերջիններս տեսնելով, որ իրենք «ճնշված ժողովուրդ» են, փրկեն իրենց²¹:

❖ Սանձազերծված պատերազմը և դրանում Գերմանիայի հավանական հաղթանակը համարվում էր երկրում դրական փոփոխությունների և բոլշևիկյան ռեժիմից ազատագրման հնարավորություն: Ինչպես Դեվիսն է նշում՝ 20-րդ դարի հեղափոխությունները եղան Առաջին աշխարհամարտում Ռուսաստանի պարտության հետևանք. այդ պատճառով բնակչությունը պատերազմը դիտարկում էր որպես փոփոխությունների կատալիզատոր²²: Այն ընկալվում էր իբրև «տիեզերքի վերակազմավորման» հնարավորություն, քառս, որը կհանգեցնի նոր

¹⁸Дэвис С., Мнение народа в Сталинской России. Террор, пропаганда и инакомыслие, 1934-1941, РОССПЭН, Москва, 2011, с. 96.

¹⁹Harvard Project on the Soviet Social System, Schedule A, Case 31, p. 38.

²⁰Տե՛ս, Արմենիա Տոսպ(խոսար)իսի յուրուբյան էջ, Պարույր Տոնոյան, 24.01.2014, <https://www.youtube.com/watch?v=ZgB83kKK2ZU>, 24:30-րդրոպեն:

²¹ՀԱԱ, Ֆ. 1191, Ց. 4, Գ. 415:

²²Дэвис С., նշվ. աշխ., էջ 92:

կոսմոսի²³: Անջատողական տրամադրությունները գերակշռում էին հատկապես գյուղացիների մոտ, որոնք հուսով էին, որ պատերազմը կոլխոզներին վերջ կտա: Կոլխոզները լուծարելու մասին մտքեր շատ են հանդիպում արխիվային գործերում: Հարվարդյան բանասացի համաձայն. «*Դուք կարծում եք, որ 1941 թվին մարդիկ ուզում էին, որ Հիտլերը ղեկավարի իրենց երկիրը: Ո՛չ, նրանք ուղղակի ուզում էին ազատվել բոլշևիզմից*»²⁴:

Երկրում ընդդիմության բացակայությունը մարդկանց ստիպում էր այլընտրանք փնտրել՝ ի դեմս հակառակորդի: Կուսակցական ամփոփումներում և ՆԳԾԿ հաշվետվություններում հաճախակի էին պատերին ամրացված սվաստիկաների մասին տեղեկությունները՝ չնայած դա ինքնին Հիտլերին և ֆաշիզմին հարել չէր ենթադրում: Օրինակ՝ հակասովետական կազմակերպություն ստեղծելու մեղադրանքով մի քանի պատանիների նկատմամբ կազմված գործում կցված է ֆաշիստական սվաստիկա պարունակող հետևյալ բովանդակությամբ նամակը. «*Կեցցե՛ Հիտլերը, որն ազատագրում է 24 տարի ճնշված Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին*»: Հետագայում՝ ճամբարներից գրված իրենց նամակներում և արդարացման համար կատարված հարցաքննություններում, պատանիները հաստատում են, որ նամակն իրենք են գրել, բայց որպես դրդապատճառ նշվում է պատանիներից մեկի ծեր հոր՝ բանակ գորակոչվելու հանգամանքը²⁵: Ըստ Դեվիսի՝ սվաստիկաների տարածումը (այս դեպքում նաև նամակի բովանդակությունը) կարող էր ուղղակի հակակառավարական քայլ լինել: Քանի որ դրանք նկարելն անօրինական էր, մարդիկ կարող էին անել դա՝ չգիտակցելով դրա իրական նշանակությունը²⁶: Ըստ բնակչության որոշակի զանգվածի ընկալման՝ ֆաշիզմն ուղղակի հակաբոլշևիզմ էր:

Եվ, վերջապես, այս տրամադրությունների գերադրական աստիճանը գերմանական բանակի՝ որպես ազատարարի ընկալումն էր, որը հաճախ էր մեկնաբանվում իբրև հակառակորդի նկատմամբ համակրանք: «*Մարդիկ ստրուկի կարգավիճակում էին, և ոչ մի տեղից հնարավոր չէր օգնություն ստանալ: Մենք ուզում էինք ողջ աշխարհին գոռալ՝ փրկեք մեզ: Երբ գերմանացիները հարձակվեցին, նրանք, ովքեր սիրում էին ժողովրդին, ուզում էին, որ գերմանացիներն ազատագրեն մեզ*»²⁷: Իսկ բռնադատված երիտասարդից բռնագրավված բանտում գրված բանաստեղծության մեջ կարդում ենք. «*Ախր նստածեմ այսոր բանտում,*

Անմեղեմ, կյանքս անտեղի մաշում,

Ասումեն Գերմանիա նոր կյանք է բերում,

²³Ilya Prigogine, Isabelle Stengers, Order out of Chaos. Man's New Dialogue with Nature, Boulder: New Science Library, 1984.


²⁴Harvard Project on the Soviet Social System, Schedule A, Case 302, p. 36.

²⁵ՀԱԱ, ֆ. 1191, Ց.14, Գ. 1384:

²⁶Дэвис С., նշվ. աշխ., էջ 95:

²⁷Harvard Project on the Soviet Social System, Schedule A, Case 113, p. 16.

Յարաբ կտեսնեն, նրա ճամփին մատաղ»²⁸:



«Հակախորհրդայինները» ցուցահանդեսում ցուցադրված նկարներից՝ վերցված բռնադատվածների անձնական գործերից

Երկրում հայրենասիրական ոգու ընկճումը և հակառակորդի ոչ միանշանակ ընկալումը սնվում էր մի քանի աղբյուրից: Նախևառաջ բնակչության կեղեքումներն՝ ի դեմս սովի, զրկանքների և ռեպրեսիաների, իշխող բոլշևիկյան կուսակցության նկատմամբ ատելություն էին առաջացրել: Դրա մասին վկայությունները բազմաթիվ են: Ուկրաինացի կինը, որի ամուսինը սովետական բանակի հրամանատար էր, պատմում է, որ իրենց բոլոր ընկերները նույն կերպ են ապրել՝ կիսատված և կիսատկլոր, ինչից հետո ավելացնում է, որ 1933թ. Ուկրաինայում սովի պատճառով մարդու մարմին էին ուտում, իսկ ձիու միսը խորտիկ էր համարվում²⁹: Չնայած 20-րդ դարի սկզբին սովից առավել տուժածն Ուկրաինայի

²⁸ՀԱԱ, Ֆ. 1191, Ց.16, Գ. 540 (Թվագրված է 1942 թ. նոյեմբեր ամսով: Ուղղագրությունը հեղինակինն է):

²⁹Harvard Project on the Soviet Social System, Schedule A, Case 113, p. 16.

բնակչությունն էր³⁰ այնուամենայնիվ, արխիվային փաստաթղթերում գտնված «Հայաստանի ազգային հեղափոխական փրկության կոմիտե» անունը կրող պատերազմի տարիներին գործող «ընդհատակյա կազմակերպության անդամներից» բռնագրավված թռուցիկի բովանդակությունը նույնպես վկայում է, որ հայերը խորհրդային մյուս ազգերի նման նույնպես մեծապես տուժել են ինչպես բռնություններից, այնպես էլ սովից.

«Արդարության, ճշմարտության և ազատության բոլոր կողմնակիցներին:

Չլսե՛լ, չհավատա՛լ և չհետևե՛լ պրոլետարյատին ստրկացնող, ամբողջ աշխատավորությանը համատարած կերպով շահագործող կարմիր ոճրագործ և արյունոտ բռնակալ-Ստալինին, որը զազանաբար զոհաբերում է ժողովուրդները բոլշևիկյան իր սհավոր սուտին:

Ժողովուրդը սովամահ է լինում:

Ժողովուրդին հաց և խաղաղություն է պետք:

Ներկա պատերազմը ժողովրդական պատերազմ չէ՛, այլ բոլշևիկյան անազնիվ նպատակները հետապնդող սպանդանոց:

Կորչի՛ պատերազմը:

Կորչի՛ Ստալին- ստի, կեղծիքի, սովի, մահվան և կոտորածի, բանդի և աքսորի արյունոտ ճիվաղը:

Ստորագրված՝ *Ժողովուրդի բարեկամներ*³¹:

Որոշ մարդկանց գնահատմամբ ապրուստի և նման պայմանները ստիպում էին ընտրել չարյաց փոքրագույնը, որի կերպարը պատերազմի առաջին տարիներին մարմնավորում էր Հիտլերը. «*Երբ դու պետք է ընտրես սուվյալ և կուշտ դիկտատուրաների միջև, իհարկե, ավելի լավ է կուշտն ընտրել: Դա նույնն է, երբ համեմատում ես հիտլերյան ռեժիմը և սովետական ռեժիմը. շատ ավելի լավ է Հիտլերին ընտրել, երբ ուրիշ ելք չկա: Հիտլերը հոգ էր տանում սեփական ժողովրդի մասին, նա նրանց լավ կերակրում և հագցնում էր: Ստալինն իր սեփական ժողովրդի համար բացարձակապես ոչինչ չէր անում*»³²: Երկրորդ, խորհրդային պրոպագանդայի հակասականությունն ավելի էր խորացրել իշխանության նկատմամբ ատելությունը և պաշտոնական տեղեկատվության նկատմամբ անվստահությունը՝ նորանոր տարածքներ զիջելուն զուգահեռ: Որոշակի իմաստով այն նույնիսկ հակառակ ազդեցությունն ունեցավ բնակչության շրջանում մենք-նրանք հակադրության կառուցման գործում: Կրկին հղելով Ս.Դեվիսին՝ ընդգծեմ, որ ֆաշիզմի և Հիտլերի նկատմամբ վերաբերմունքը

³⁰Ivan Kurilla, Memory Wars in the Post-Soviet Space, PONARS Eurasia Policy Memo No. 63, www.ponarseurasia.org/sites/default/files/policy-memos-pdf/pepm_063.pdf, 2019.

³¹ՀԱԱ, Ֆ. 1191, Ց.14, Ք. 788:

³²Harvard Project on the Soviet Social System, Schedule A, Case 335, p. 51.

միանշանակ չէր՝ չնայած խորհրդային պրոպագանդային կամ, նույնիսկ, ի հեճուկս դրան³³:
«Սովետ-նացիստական պակտը զարմանք առաջացրեց: Այն կարծես ռուսերի պայթյուն լիներ: Մենք կարծեցինք՝ դա խաբկանք է, բայց հետևող իրադարձությունները մեզ շփոթեցրին: Հանկարծ Հիտլերին սկսեցին գովերգել: Մեզ ասում էին, որ նա ծագումով բանվոր դասակարգից է: Նրան այնքան գովերգեցին, որ հետո մարդիկ սկսեցին նրան հանձնվել: Երբ պատերազմը սկսվեց, ու Հիտլերը դատապարտվեց, ամենքը դա պատերազմական պրոպագանդա համարեցին ու չհավատացին: Մարդիկ մտածում էին, որ Հիտլերը չի կարող այդքան վատը լինել»³⁴: Չի կարելի բացառել նաև ֆաշիստական քարոզչության որոշակի ազդեցությունը սովետական բնակչության որոշ հատվածի վրա: Հարվարդյան բանասացներից մեկը պատմում է. «Պատերազմի սկզբում ես լսեցի Հիտլերի ելույթը: Այն մեզ վրա մեծ տպավորություն թողեց, և մենք սպասում էինք Հիտլերին՝ հավատալով նրա ասածներին, որ գերմանացիներն եկել են մեզ ազատագրելու սովետական ռեժիմից»³⁵:

Քանի որ պրոպագանդան հենվում է մենք-նրանք հակադրություն կառուցելու վրա, մարդկանց ընկալումը նույնպես ենթարկվում է գնահատման այդ սկզբունքին. երկու հակադիր կողմերից որևէ մեկին գնահատել մյուսի պրիզմայով: Սովետական ռեժիմի նկատմամբ ատելությունը և պրոպագանդայի ամբիվալենտությունը ստիպում էր վերաբժնորել երկու կողմերին: Ստալինի ու Հիտլերի միջև համեմատությունն անցկացվում էր միայն այն դեպքում, երբ սեփական երկրի առաջնորդի նկատմամբ վերաբերմունքը բացասական էր³⁶: Այդ համեմատության արդյունքում տոտալիտար ռեժիմների երկու առաջնորդները դրվում էին կա՛մ հավասար նժարների վրա, կա՛մ Հիտլերին հակադրում էին Ստալինին՝ արդեն կախված Հիտլերի նկատմամբ վերաբերմունքից:

Ինչպես տեսնում ենք, «ֆաշիզմի նկատմամբ համակրանքի» մասին վկայությունները գրեթե նույն բովանդակությամբ առկա են արխիվային գործերում, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ ստալինյան բռնություններն ուղղվում էին անջատողական տրամադրությունները ճնշելուն, կամ հայտնի խոսույթներն օգտագործում էին՝ երկրում բռնություններ սանձազերծելու համար: Այնուամենայնիվ, հետևելով արխիվային գործերի տրամաբանությանը՝ պետք է ենթադրել, որ հաճախ չգիտակցված քայլերը կամ անզգույշ խոսակցությունները ՆԳԾԿ-ի կողմից որակվում էին որպես ֆաշիստական գործունեություն:

Այսպիսով, մեր օրերում Երկրորդ համաշխարհային պատերազմն ավելի է սակրալացվում, քան դրանից անմիջապես հետո: Երբեմն այն նույնիսկ զուգորդվում է Ստալինի անձի

³³Дэвис С., նշվ. աշխ., էջ 94:

³⁴Harvard Project on the Soviet Social System, Schedule A, Case 96, p. 58.

³⁵Harvard Project on the Soviet Social System, Schedule A, Case 64, p. 33.

³⁶Հատկանշական է, որ Դեմիսի հղմամբ տոտալիտար ռեժիմների բնակիչներին բնորոշ առաջնորդների միջև համեմատությունների անցկացումը ֆիքսել են նաև Իտալիայում, որտեղ պատերին նկարում էին ԽՍՀՄ խորհրդանիշը:

պաշտամունքի հետ: Պատերազմի հաջորդ տասնամյակի ընթացքում, երբ նացիզմի նկատմամբ սովետական հաղթանակը դարձել էր Ստալինի «հանճարեղության» հոմանիշը՝ չնայած Խրուշչովի հետագա ջանքերին, որը պատերազմը հռչակեց ժողովրդի հաղթանակ, ԽՍՀՄ փլուզումից հետո Ստալինի անունը կրկին կցվեց «Հայրենական մեծ պատերազմի» հերոսական նարատիվին՝ խամբեցնելով Ստալինի անվան հետ կապված բռնությունների պատումները³⁷: Դրանց հետ մեկտեղ լռեցվեցին նաև այլ պատումներ, քանի որ դրանք կարող էին կասկածի տակ դնել ԽՍՀՄ ժողովուրդների անմոռաց նվիրումը և հայրենասիրական մղումները՝ վնասելով պատերազմի սակրալացման և հերոսակացման պատումին, որի շուրջ պետք է կառուցվեր ԽՍՀՄ ժողովուրդների ինքնությունը:

Այժմ «Հայրենական մեծ պատերազմի» պաշտամունքը բոլորովին նոր դեր է ստանձնել՝ իր մեջ ամփոփելով սովետական անցյալի՝ որպես երջանիկ տարիների նարատիվը և հետին պլան մղելով այդ տարիներին ապրող բնակչության տրավմատիկ անցյալը: Պատերազմի մասին կոլեկտիվ հիշողությունն այն գերակշռող նարատիվներից է, որը կապում է հետխորհրդային Հայաստանը ԽՍՀՄ ընդհանուր պատմությանը:

³⁷Roger Markwick, նշվ. աշխ.: